ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԵՆԹԱՐԿՎԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՑ

Ստեփանակերտում հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած ողբերգական միջադեպը՝ զինծառայողների և բնակչության ընդհարումը, որը ԼՂԻՄ-ի երկարատև շրջափակման, ազգամիջյան հարաբերությունների ծայրաստիճան լարվածության, ինքնավար մարզի պրոբլեմի լուծման ձգձգման դրսևորումներից մեկն է, առաջ է բերել մեր հանրապետության հասարակայնության արդարացի վրդովմունքն ու անհանգստությունը: Ահա թե ինչու այդ հարցը դարձավ Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի տասներորդ արտահերթ նստաշրջանի հոկտեմբերի 15-ի նիստի օրակարգի քննարկման առարկան:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Օ. Ի. Լոբովը** դեպուտատներին ներկայացրեց ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեից ստացած ինֆորմացիան, որն, անշուշտ, կրում էր խիստ նախնական բնույթ:

Հատուկ կառավարման կոմիտեի ինֆորմացիան դեպուտատները միանշանակ չընդունեցին: Առանձին ելույթներում (դեպուտատներ Ռ. Քոչարյան, Ռ. Ղազարյան, Խ. Ստամբոլցյան և ուրիշներ) արտահայտվում էր այն միտքը, որ ինֆորմացիայում բերված առանձին բացատրությունները անհամոզիչ են: Չէ որ դրանից շատ առաջ գեներալ-մայոր Վ. Սաֆոնովի տված հարցազրույցում բոլորովին էլ չի նշվել, թե կուրսանտների վրա հայ բնակչության կողմից կրակ է բացվել: Ընդհակառակը, հատուկ շրջանի պարետը ընդգծել է, որ զինվորների կողմից կրակ բացելու անհրաժեշտություն չի եղել: Կասկածելի համարվեց նաև այն փաստարկը, թե իբր բնակիչները քարեր են նետել ավտոմեքենաների վրա, քանի որ ներքին գործերի Ստեփանակերտի քաղաքային վարչության և ԽՍՀՄ ՆԳՄ քրեական հետախուզության գլխավոր վարչության ներկայացուցիչների կողմից շարասյան անցած ամբողջ ճանապարհի երկայնքով կատարված ուսումնասիրությունը ապակու ոչ մի կտոր չի հայտնաբերել: Դրա վերաբերյալ կա պաշտոնական արձանագրություն: Փաստը մնում է փաստ, որ զինծառայողների ավտոշարասյուներից կրակ է բացվել անզեն մարդկանց վրա, որի հետևանքով վեց մարդ տուժել է, նրանցից մեկը զոհվել է: Այս միջադեպը դեպուտատները գնահատում էին որպես պրովոկացիա իր արդար գործի համար արդեն մոտ երկու տարի մաքառող, անասելի զրկանքներ ու տառապանքներ կրող Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ: Նրանք պահանջում էին քաղաքական գնահատական տալ այդ միջադեպին, որպես Ադրբեջանի կողմից հայ ազգաբնակչությանը ճնշելու, ահաբեկելու, քաղաքական շղթայի օղակներից մեկի: Հաշվի առնելով, որ զինվորականները առանց անհրաժեշտության կրակ են բացել Ստեփանակերտի խաղաղ բնակչության վրա, դեպուտատները պահանջում էին ստեղծել դեպուտատական հանձնաժողով հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ, որն ուսումնասիրի միջադեպի բոլոր հանգամանքները և արդյունքների մասին զեկուցի ՀԽՍՀ Գերագույն խորհրդին:

Դեպուտատ **Ռ. Թամիրյանը** (Լենինական) արտահայտեց աղետի գոտու աշխատավորների մտահոգությունը Ստեփանակերտում տեղի ունեցած վերջին իրադարձության կապակցությամբ, դա գնահատելով որպես մի ակտ, որի նպատակն է փակուղի մտցնել ԼՂԻՄ-ի պրոբլեմը:

Նա դիմեց Հայկական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներին՝ իրենց ձայնը հասցնել միութենական կառավարությանը, պահանջել խաղաղ բնակչության անվտանգության երաշխիքներ:

Իր ելույթում դեպուտատ **Ս. Մուրադյանը** Ստեփանակերտի դեպքը դիտեց որպես որոշակի շրջանների քաղաքական նպատակների դրսևորումներից մեկը, նշելով, որ դա պարզապես սարքված գործ է, որպեսզի հանրության աչքում գցվի հայ ժողովրդի վարկը, ճնշվի արդարության ձայնը: Հայ ժողովրդի դեմ նման ոտնձգություններ արդեն շատ ու շատ են պլանավորվում և դա լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Ես կարծում եմ, ասաց դեպուտատը, որ մեր Գերագույն խորհուրդը հիմա պիտի դիմի կուսակցության Կենտրոնական կոմիտեին, նաև միջոցներ ձեռնարկի ժողովրդի պաշտպանությունը ընդման հարձակումներից ապահովելու համար: ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Ս. Խանզադյանը** ներկաների ուշադրությունը հրավիրեց Գորիսի շրջանի Տեղ գյուղում զինվորականների կատարած ապօրինի ստուգումների վրա, որը բացահայտորեն եղել է ադրբեջանական կողմի հրահրմամբ: Գրողը խիստ կասկած հայտնեց Ստեփանակերտի միջադեպի վերը նշված փաստարկումների դեմ, նշելով, որ ընդհանրապես ոչ մի հայ հայրենի զինվորի դեմ ձեռք չի բարձրացնի: Միջադեպը խիստ կասկածելի է, ուրեմն պետք է պարզաբանել իրերի ընթացքը, մեղավորներին ենթարկել խիստ պատասխանատվության: Դեպուտատ **Կ. Դալլաքյանի** ելույթում ևս ընդգծվեց այն միտքը, որ զինվորների և հայազգի մարդկանց ընդհարումը պրովոկացիա է, որը նպատակ ուներ համոզելու, թե հայ մարդիկ ներծծված են թշնամանքով դեպի զինվորը, դեպի ռուս մարդը:

Ես կարծում եմ, ասաց նա, որ Օ. Ի. Լոբովի տված ինֆորմացիան պարունակում էր մի կարևոր նյութ, որի կողքով մենք անցանք: Դա Ստեփանակերտում հասարակության և բանակի ներկայացուցիչների համատեղ ժողովի որոշումն է, որտեղ նշված է, որ միջադեպը ոչ թե ժողովրդի ու զորքի միջև եղած իրական պատկերը է, այլ թյուրիմացության արդյունք կամ դիտավորյալ պրովոկացիա: Ես կուզենայի, որ մենք մտածեինք այդ ուղղությամբ և այդ կերպ էլ վարվեինք որպես Գերագույն խորհուրդ՝ սպասենք մինչև հանձնաժողովի վերջնական եզրակացությունը:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Բ. Դադամյանը,** խոսելով Ստեփանակերտի ողբերգական իրադարձության մասին, նշեց, որ դա եզակի փաստ չէ: ԼՂԻՄ-ի հայ բնակչության նկատմամբ տարվում է հոգեբանական ճնշման քաղաքականություն, և դա ոչ միայն Ադրբեջանական հանրապետության, այլև կենտրոնական մամուլի օրգանների, «Ժամանակ» հեռուստածրագրի կողմից: Ամեն ինչ անում են մեզ անվանարկելու ամբողջ խորհրդային հանրության աչքում: Եվ դա այն ժողովրդի նկատմամբ, որը ռեգիոնի ընդհանուր առաջին անգամ ընդունում ընդ ռուսական կողմնորոշում, այն ժողովրդի, որն արդեն մեկուկես տարի գտնվում է հոգեցունց վիճակում: Ուստի այսօր մենք պետք է քննարկենք ոչ միայն այս փաստը, այլև ամբողջ փաստերի միագումարը:

Հանրապետության կանանց ակտիվի ժողովը դատապարտեց Ստեփանակերտի ողբերգական միջադեպի հեղինակներին, իր ելույթում ասաց կանանց խորհրդի նախագահ, դեպուտատ **Ն. Հակոբյանը:** Նրանք պահանջում են դեպքի հանգամանալի վերլուծություն: Չէ որ նման կրակոցները կարող էին վերածվել զանգվածային ընդհարումների. մենք արտահայտում ենք մեր հիացմունքը Արցախի ժողովրդի արիության ու տոկունության կատմամբ, որը ցուցադրեց սահմանադրական պայքարի իր վճռականությունը:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Կ. Սիմոնյանը** գտնում է, որ անհրաժեշտ է, որպեսզի միութենական Գերագույն խորհրդի նախագահությունը, ԽՍՀՄ պաշտպանության մինիստրությունը ցավակցություն հայտնեն միջադեպից տուժածներին ու նրանց ընտանիքներին: Գոնե այս անգամ: Չէ որ ցավակցության, մխիթարանքի նման խոսքեր չլսեցին սումգայիթյան և մյուս ոճրագործությունների զոհերի հարազատները, տուժածները: Նման միջադեպերին վերջ տալու համար, գտնում է դեպուտատը, հարկավոր է նախ և առաջ արագացնել ԼՂԻՄ-ի հարցի քաղաքական լուծումը, հետևաբար և նստաշրջանում ընդունվող փաստաթղթում պետք է արտացոլվի այդ հիմնականը, որով և պայմանավորված են շրջափակման վերացումը, մյուս հարցերի լուծումը:

Հարցի քննարկման վերաբերյալ այլ կարծիք հայտնեց դեպուտատ **Ա. Կիրակոսյանը:** Նա գտնում է, որ ամենակարևորը այսօր ԼՂԻՄ-ի հարցի լուծումն է և ոչ թե միջադեպերի, որոնք գալիս են ընդհանուր պրոբլեմից և կարող են էլի կրկնվել: Յուրաքանչյուր նորմատիվ ակտ, որ պիտի ընդունի Գերագույն խորհուրդը, անպայմանորեն պետք է բխի երկրի հիմնական օրենքից: Իսկ այդ օրենքը՝ սահմանադրությունը, որը գալիս է ստալինյան ժամանակներից, պետք է հիմնովին վերանայել:

Այսօր խոսքը գնում է ժողովրդի բախտի ու ճակատագրի մասին, շատ ավելի հեռուն գնացող կարևոր հարցի մասին: Նման միջադեպային հարցերը անընդհատ քննարկելով մենք կարող ենք վերջնականապես մարդկանց գրգռել մեր դեմ: Մի ժողովուրդ, որ դարեր շարունակ եղել է ամենաառուսոֆիլը, այսօր ստիպում են անպայման ռուսոֆոբ դառնալ: Ստեփանակերտում տեղի ունեցած վերջին իրադարձությունը պետք է տեսնել այս կոնտեքստի մեջ և դրա ուղղակի հետևանքը, որը կարող է վաղը նորից շարունակվել և նոր բռնկումների տեղիք տալ: Ուստի և անհրաժեշտ է պարզություն մտցնել Սումգայիթից մինչև այսօրվա դեպքերը, որպեսզի իմանանք, թե ինչ է կատարվում, պարզենք, թե որոնք են Ղարաբաղի հարցի լուծման իրավական ուղիները և ինչ պետք է անել:

Մի շարք դեպուտատների ելույթներում (Ռ. Ալեքսանյան, Լ. Խաչատրյան և այլն) խիստ անհանգստություն էր արտահայտվում ոչ միայն ԼՂԻՄ-ում, այլև մեր հանրապետության առանձին ռեգիոններում ազգամիջյան հողի վրա ստեղծված ծանր կացությունից դուրս գալու հարցերի շուրջ:

Քննարկված հարցի առթիվ ընդունված որոշմամբ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը դատապարտեց Ստեփանակերտի խաղաղ բնակչության դեմ ներքին գործերի ստորաբաժանումների կողմից զենքի գործադրումը, հարց բարձրացրեց ԽՍՀՄ ՆԳ մինիստրության և պաշտպանության մինիստրության առջև, ելնելով ռեգիոնում ստեղծված լարված իրավիճակից, նման միջադեպերը կանխելու նպատակով զորամիավորումների տեղաշարժերը կատարելիս նախապես տեղյակ պահել տեղական իշխանություններին:

Այնուհետև դեպուտատները անցան օրակարգի հաջորդ հարցի քննարկմանը:

Լսվեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, Երևանի պետհամալսարանի ռեկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս **Ս. Համբարձումյանի** ինֆորմացիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ներկա՝ երկրորդ նստաշրջանում Հայկական ԽՍՀ-ից ժողովրդական դեպուտատական կորպուսի գործունեության մասին: Նա մասնավորապես կանգ առավ հանրապետության շրջափակման վերացման ուղղությամբ միութենական կառավարության կողմից ձեռնարկվող միջոցների վերաբերյալ մեր դեպուտատական խմբի հարցադրման մանրամասների վրա: Ինչպես հայտնի է, խումբը պատրաստեց այն ելույթը, որով հանդես եկավ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը: Այդ փաստաթուղթը հիմնականում կառուցված էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշման հիման վրա, որոշ փոփոխություններով հանդերձ: Ըստ որում, դրա կազմմանը մասնակցում էին նաև հանրապետությունից մեկնած խորհրդականները: Այդ, ինչպես և ԽՍՀՄ հաղորդակցության նախարարների մինիստրի ելույթները լույս ափոեցին իրավիճակի վրա: Դրանից հետո արդեն, երբ հանդես եկավ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Լ. Ա. Վորոնինը և ներկայացվեց Խորհրդային Միության կառավարության նախագիծը Հայաստանի շրջափակման մասին, մեր դեպուտատները այն խստորեն քննադատեցին: Նախագահողը՝ Մ. Ս. Գորբաչովը գտավ, որ իսկապես այդ նախագիծը չի կարելի դնել քվեարկության, և այն հետ վերադարձվեց: Փաստաթղթի վերանայմանը մեր դեպուտատներից մասնակցում էին Հ. Ոսկանյանը, Ս. Հարությունյանը, Զ. Բալայանը, Մ. Մինասբեկյանը: Քննարկման ընթացքում նախագիծը հիմնովին փոխվեց, որը նախկինի համեմատ շատ ավելի նպաստավոր էր: Քննարկումը տեղի ունեցավ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ի. Ռիժկովի նախագահությամբ: Հետագայում Գերագույն խորհուրդը այն հաստատեց: Ինչ վերաբերում է այն միջադեպին, երբ շրջափակման հարցի կապակցությամբ կառավարության որոշման քննարկման ժամանակ մեր դեպուտատները թողեցին դահլիճը, ապա դա հարկադրական քայլ էր: Եղան կարծիքներ, ասաց Ս. Համբարձումյանը, որ երևի պետք չէր դուրս գալ, բայց այնուամենայնիվ, մենք գտանք, որ դա հարկավոր էր այդ իրավիճակում: Երբ մեր ձայնը մնում է անուշադիր, որ արվում են ինչ-որ արհեստական բաներ՝ ձգձգելու մեր հարցի վերջնական և ոադիկալ լուծումը:

Մեզ համար, ասաց Ս. Համբարձումյանը, երկու կարևոր հարց կա. ԼՂԻՄ-ի պրոբլեմի անհապաղ լուծումը և հանրապետության շրջափակման վերացումը: Հիմա հանձնաժողովներում առաջիկայում քննարկվելու են սեփականության մասին կարևոր հարցեր, որոնք համաժողովրդական նշանակությամբ հանդերձ պարունակում են նաև մեզ հետ առնչվող հարցերը, ուստի և մենք ունենք մեր նկատառումները:

Կարևոր հարց է մամուլի և ինֆորմացիայի աղբյուրների օրենքի հարցը, որն առնչվում է Վիեննայի համաձայնագրի հետ: Պետք է իրոք լինի մամուլի ազատություն: Ես կարծում եմ, որ ոչ միայն պառլամենտի անդամները, այլև բոլոր դեպուտատները պետք է մասնակցեն այդ հանձնաժողովների աշխատանքներին և նստաշրջանի նիստերին:

Ս. Համբարձումյանի տված ինֆորմացիան առաջ բերեց նիստի մասնակիցների աշխույժ քննարկումը: Ելույթ ունեցողները մեծ շահագրգռությամբ արտահայտեցին իրենց նկատառումները Հայկական դեպուտատական կորպուսի գործունեության վերաբերյալ: Ես այնքան էլ ճիշտ չեմ համարում, ասաց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Բ. Դադամյանը,** որ այստեղ առաջարկություններ արվեն ժողովրդական դեպուտատների դիրքորոշումը սահմանելու համար: Մենք բոլորս նույն ժողովրդի իղձերի արտահայտիչներն ենք, ուստին, ըստ երևույթին, իմանալով նրանց իղձերը, մենք պետք է մեզ նույն կերպ պահենք: Թե դուք և թե մենք պետք է ունենանք միևնույն մտածողությունը:

Ոչ ոք չի ուզում նստաշրջանում քննարկել մեր հարցը: Մենք պետք է հաստատակամորեն պահանջենք մեկ բան՝ մեր հարցի քննարկումը Գերագույն խորհրդի նստաշրջանում: Եթե անհրաժեշտ է՝ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Հայաստանի դեպուտատական խումբը հարկադրված էր դիմել իր իրավունքների պաշտպանության այնպիսի ծայրահեղ միջոցի, ինչպիսին նիստերի դահլիճից դուրս գալն է, ասաց դեպուտատ **Պ. Հակոբյանը:** Տվյալ պառլամենտական ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ է, որ երկրի Գերագույն իշխանության նախագահությունը մեծամասնության ուժերի օգտագործումից անցնի փոքրամասնության շահերի պաշտպանության մեխանիզմների մշակման: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև հանրապետություններից ընտրված դեպուտատների վետոյի իրավունքը, երբ շոշափվում են երկրի ազգերի ու ազգությունների համար կենսականորեն կարևոր հարցեր: Դեպուտատները պետք է տիրապետեն իրենց քաղաքական կրքերին և ժողովուրդներին չզրկեն պառլամենտական պայքարի անցուդարձին հետևելու հնարավորությունից: Ազգային հարցի շուրջը սուր բանավեճերը ճշմարտության որոնման, ազգամիջյան երկպառակության փակուղուց դուրս գալու ուղիների որոնման ձև են: Այդ բանավեճերը հսկայական դաստիարակչական պոտենցիալ են պարունակում և ոչ ոք իրավունք չունի մեզ մատուցելու կիսաճշմարտություն՝ ճշմարտության որոնման կենարար պրոցեսի փոխարեն:

Ղարաբաղյան պրոբլեմի լուծման ձգձգելը ծնեց ուժային ճնշման նոր ձևեր: Մեր հարևանները ԼՂԻՄ-ի շրջափակումից անցան սուվերեն հանրապետության շրջափակման: Մենք երկու ամիս վկա ենք այդ քաղաքական խայտառակ վիճակը կոծկելու փորձերին, այն բանին, որ «բլոկադա» և «Ադրբեջան» բառերը դատապարտումով չարտաբերվեցին: Իրադարձությունների զարգացումը կանխատեսելու և միջոցներ ձեռնարկելու փոխարեն երկրի պառլամենտը բոլոր միջոցներով ձգտում է զրկել խորհրդային ժողովրդին մեր ռեգիոնում տիրող ռեալ իրադրության մասին լրիվ ինֆորմացիայից:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Ս. Նազարյանը** իր ելույթում ընդգծեց, որ Հայկական ԽՍՀ-ի դեպուտատները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում հիմնականում հանդես են գալիս միասնաբար, որ նրանց ուղղություն են տալիս հանրապետության ղեկավարները: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թե ինչու դեպուտատները նստաշրջանի դահլիճից դուրս են եկել, իսկ ղեկավարները՝ ոչ, ապա այդպիսի հարցադրումը լիովին սխալ է: Անձամբ ես գտնում եմ, որ մենք չպետք է դուրս գայինք այդ պահին: Գերագույն խորհրդի նիստերի դահլիճը քարվանատուն չէ, որ, երբ ուզենաս, մտնես ու դուրս գաս: Պետք է ամեն ինչ անել խոհեմ ու կշռադատված: Չի կարելի մեր դեպուտատներին մեղադրել նաև ակտիվության պակասի մեջ: Նրանք շատ լավ են մասնակցել հարցերի քննարկմանը, հայ ժողովրդի ձայնը հասցրել վերևները: Մենք պետք է միասնական լինենք, օգնենք միմյանց դեմոկրատական ճանապարհով մեր կենսական պրոբլեմները լուծելու համար:

Իրենց մտորումները արտահայտեցին նաև ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ **Է. Հարությունյանը, Լ. Հարությունյանը,** Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, դեպուտատ **Է. Աղայանը,** պատմաբան **Լ. Խուրշուդյանը,** բանաստեղծ **Գ. Էմինը** և մյուսները:

Նիստում հանդես եկավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Ս. Հարությունյանը:**

Գերագույն խորհուրդը ի գիտություն ընդունեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Հայկական ԽՍՀ-ի ժողովրդական դեպուտատների գործունեության վերաբերյալ հաղորդումը:

Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
(Արմենպրեսի թղթակիցներ)

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ

Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ տասներորդ նստաշրջանի նախապես հայտարարված՝ սույն թվականի հոկտեմբերի 21-ի նիստը տեղի կունենա հոկտեմբերի 27-ին, ժամը 10-ին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում (Մեզիք-Ադամյան, 20):

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ